ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 16 » ապրիլ 2026թ. No 2129 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 03/1969-26 առ 13.04.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 5 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին`

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի ապրիլ «16 » - ի  N2129 - Ա հրամանի

# Գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նայզ | նիմեսուլիդ | դեղահատեր | 100մգ; (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես ՍՊԸ, Ֆորմուլեյշն մասնաճյուղ 6, գյուղ Խոլ, Նալագարի ճանապարհ, Բադդի, շրջան Սոլան, Էյչ, Փի, 173205 | Հնդկաստան | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես ՍՊԸ, 8-2-337, Ռոադ No. 3, Բանջարա Հիլզ, Հայդարաբադ, Թելանգանա-500034 | Հնդկաստան | Դ | 23987 10.04.2026 |
| 2 | Նայզ | նիմեսուլիդ | դեղահատեր | 100մգ; (20/2x10/) բլիստերում, (30/3x10/) բլիստերում | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես Լիմիտեդ, Ֆորմուլատիոնս, Թեք Օպս II, Սուրվայ No. 42պ, 43, 44պ, 45պ, 46պ, 53, 54 և 83, Բաչուպալլի գյուղ, Բաչուպալլի Մանդալ, Մեդչալ Մալքաջգիրիլ դիստրիքտ, Տելանգա սթեյթ 500090 | Հնդկաստան | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես ՍՊԸ, 8-2-337, Ռոադ No. 3, Բանջարա Հիլզ, Հայդարաբադ, Թելանգանա-500034 | Հնդկաստան | Դ | 23988 10.04.2026 |
| 3 | Էլադիս | Ն-[2-(1Հ-իմիդազոլ-4-իլ)-էթիլ]-6-օկսո-դելտա-լակտամ | դեղահատեր թաղանթապատ | 40մգ; (14/1x14) բլիստերում | Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շչելկովո, Ֆաբրիչնայա փ., 2 | Ռուսաստան | Վալենտա Ֆարմ ԲԸ, 141108, Մոսկվայի շրջան, Շչելկովո, Ֆաբրիչնայա փ., 2 | Ռուսաստան | Դ | 23989 10.04.2026 |
| 4 | Օմեզ ԴՍՌ ՏՄ | օմեպրազոլ, դոմպերիդոն | դեղապատիճներ աղելույծ | 30մգ+20մգ; (30/3x10/) բլիստերում | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես Լիմիտեդ, Ֆորմուլատիոնս, Թեք Օպս II, Սուրվայ No. 42պ, 43, 44պ, 45պ, 46պ, 53, 54 և 83, Բաչուպալլի գյուղ, Բաչուպալլի Մանդալ, Մեդչալ Մալքաջգիրիլ դիստրիքտ, Տելանգա սթեյթ 500090 | Հնդկաստան | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես ՍՊԸ, 8-2-337, Ռոադ No. 3, Բանջարա Հիլզ, Հայդարաբադ, Թելանգանա-500034 | Հնդկաստան | Դ | 23990 10.04.2026 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Օմեզ ՏՄ | օմեպրազոլ | դեղապատիճներ աղելույծ | 20մգ; (30/3x10/) ստրիպում, (30/3x10/) բլիստերում | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես Լիմիտեդ, Ֆորմուլատիոնս, Թեք Օպս II, Սուրվայ No. 42պ, 43, 44պ, 45պ, 46պ, 53, 54 և 83, Բաչուպալլի գյուղ, Բաչուպալլի Մանդալ, Մեդչալ Մալքաջգիրիլ դիստրիքտ, Տելանգա սթեյթ 500090 | Հնդկաստան | Դր. Ռեդի'ս Լաբորատորիես ՍՊԸ, 8-2-337, Ռոադ No. 3, Բանջարա Հիլզ, Հայդարաբադ, Թելանգանա-500034 | Հնդկաստան | Դ | 23991 10.04.2026 |